Յան Պաուլ Սխուտեն և Կեյս դը Բուր

Աշխարհի ամենալավ, ամենահոյակապ, ամենահրաշալի պապիկները

Հայկը ունի երեք պապիկ: Երեքն էլ նույն տան մեջ միասին են ապրում: Դե, նա, իհարկե, երեք տատիկ էլ ունի: Բայց տատիկները պապիկների ձեռքը կրակն ընկել, տեղափոխվել են բոլորովին ուրիշ՝ հեռո՛ւ, շա՛տ հեռու մի տեղ՝ ոչ ավել, ոչ պակաս նույն փողոցի դիմացի մայթի տուն:
Այս շաբաթ Հայկն իր պապիկների մոտ է մնալու:

Նրանց մոտից է գնալու դպրոց: Իսկ դպրոցը բավականին հեռու է: Դրա համար պապիկները Հայկի համար հեծանիվ են հավաքել: Միայն թե հեծանիվը փոքր-ինչ խարխուլ է:
- Հա՛յկ, - ասում է Անուշավան պապը, - տե՛ս, թե քեզ համար ի՞նչ ընտիր հեծանիվ ենք հավաքել:
- Շնորհակալություն, - ասում է Հայկը, - բայց չէի ասի, թե ընտիր է: Անվադողերը ծակ են, ղեկը թեք է, ակները ծուռ են, նստարանն էլ իսկի ամրացված չէ:

- Դե լավ, հա՛, - ասում է Մնացական պապը, - ես քո տարիքում շա՛տ ուրախ կլինեի այսպիսի հեծանիվ ունենալու համար: Իմ հեծանիվի դողերը միշտ ծակ էին լինում:
- Դողե՞րը: Դողերից ես խոսում, - բացականչում է Պատվական պապը, - բախտավոր երեխա ես եղել: Իմն իսկի դողեր չուներ, ակները փայտից էին, նստարանն էլ ոչ մի անգամ ամրացված չէր լինում:

- Ձերը դեռ լավ է, - ասում է Անուշավան պապը, - իմ հեծանիվն ուներ փայտե, քառակուսի ակներ, նստարան ընդհանրապես չուներ և ուներ ընդամենը մեկ ոտնակ:

- Պա՛հ, դա էլ է մեծ բան, - ասում է Մնացական պապը, - իմ առաջին հեծանիվն ակներ չուներ: Հեծանիվ հո չէր, հեծան էր: Ամեն օր եղանի վրա ցատկոտում էի դպրոց:

-Երանի՛ քեզ, - ասում է Պատվական պապը, - մի քանի ամիս մի հեծանիվ ունեի, ջարդուփշուր եղավ այնպես, որ նրանից միայն մի ժանգոտ ձող մնաց: Էդ ձողի վրա ցատկոտելով դպրոց էի գնում: Իսկ դպրոցը երեսուն կիլոմետր հեռու էր:
- Ավելի մոտիկ դպրոց չկա՞ր, ի՞նչ է - հարցնում է Հայկը:

- Չէ՛, չկար, - ասում է Անուշավան պապը, - բայց կար ավելի հեռուն: Ես ամեն օր քառասուն կիլոմետր գնում, քառասուն կիլոմետր ետ էի գալիս, մի քառակուսի, ժանգոտ փայտե անիվի վրա:

- Քո գնալ-գալը խաղուպար է եղել, Անուշավա՛ն, - ասում է Մնացական պապը, - հո ինձ նման լեռների վրայով չես գնացել դպրոց:
Պատվական պապը ծիծաղում է:

- Դու էդ փոքրիկ բլրակներին լեռներ անունն ես տալիս, հա՞: Մեր լեռների համեմատ դրանք փոսե՛ր էին: Մեր դպրոցը երկրի ամենաբարձր սարի գլխին էր. տարին տասներեք ամիս ձյուն էր նստած լինում:
- Ո՞նց թե, տարին տասներեք ամիս..., – զարմանում է Հայկը:
- Դե, լավ, հա…,– ասում է Պատվական պապը, - էդ լավագույն դեպքում: Հաճախ ավելի երկար էր մնում:

- Էդքան բա՞ն: Երանի՛ քեզ, - ասում է Անուշավան պապը, - Երկրի ամենաբարձր սարն ես ասում: Իմ դպրոցն Ուրալյան լեռների գլխին էր գտնվում: Ամռանն էլ այնտեղ երեսուն աստիճան ցուրտ էր: Ժամերով ձյուն էի ճեղքում, որ դպրոցը գտնեմ:
- Ոչ թե երկրի, այլ աշխարհի՛ ամենաբարձր սարի մասին էի խոսում, - վրա է բերում Պատվական պապը,-իսկ այնտեղ, երբ կանգնում էի ոտնաթաթերիս վրա, ձեռքս հասնում էր լուսնին: Ու դեռ տունդարձի ճամփան էլ էր ելնում սարնիվեր:

- Այո, տղաս, մեր ժամանակ այդպես էր, - Հայկին է ասում Պատվական պապը: - Ամեն առավոտ ես ժամը հինգին էի վեր կենում, որ հասցնեի թերթերը բաժանել:
- Երանի քե՛զ, կարգին փափուկ կյանք ես ունեցել, - բացականչում է Անուշավան պապը, - ժամը հինգի՛ն: Ինձ համար, մինչև հինգը քնելը արքայություն կլիներ: Ես գիշերը երկուսին տասնհինգ պակաս էի վեր կենում, որ թերթերը տանեմ, հասցնեմ թերթ բաժանողներին:
-Երանի ձե՛զ, - ասում է Մնացական պապը, - տեղը տեղին քնել եք: Ես թերթերի գործարանում էի աշխատում ու դեռ քուն չմտած արդեն վեր էի կենում:

- Ամենատհաճ բանն այն էր, որ մեկ-մեկ անձրև էր գալիս, - ասում է Անուշավան պապը:
- Մեկ-մե՞կ, - հարցնում է Պատվական պապը:
Անուշավան պապը օրորում է գլուխն ու ասում՝
- Մեզ մոտ անձրև ամեն օր էր գալիս: Նարնջի չափ խոշոր կաթիլներով:
Մյուս պապիկները լռում են: Ի վերջո Անուշավան պապը կանչում է՝
- Ուզում եմ ասել՝ ձմերուկի չափ կաթիլներով էր գալիս:
- Այդքան բան, հա՞, - ասում է Մնացական պապը, - մենք դա անձրև չէինք էլ համարի: Ես դպրոց գնալիս միշտ մի խողովակ ու դիմակ էի վերցնում հետս: Ու երբ թաց գուլպաներս քամում էի, հատակը ծայրից ծայր թրջվում էր:

Պատվական պապը բարձր ձայնով հորանջում է:
- Երանի՛ ձեզ: Իսկ ես, երբ անձրևաջուրը ականջիցս դուրս էի թափում, ամբողջ դասասենյակն էր հեղեղի մեջ կորչում:

- Այդքան բան, հա՞, - որոտում է Մնացական պապը, - հա՛-հա՛-հա՛, փափկակենցա՛ղ: Այնտեղ, որտեղ ես ականջիցս ջուր եմ թափել, գետ է գոյացել, անունն էլ՝ Դանուբ:
- Դանո՞ւբը, - բացականչում է Հայկը, - Եվրոպայի ամենամեծ գետն է Դանուբը:
- Ճիշտ ես, - ասում է Մնացական պապը, - Այդ օրվանից ամենամեծն է:

- Իմ ճանապարհի ամենավտանգավոր մասը ջունգլիներով էր անցնում, - ասում է Պատվական պապը, - հո ճանապարհ չէր, ավազակների դարան էր: Իսկ պաշտպանվելու համար ունեցած-չունեցածս խաղալիք ատրճանակ էր:
- Այ քե՛զ բան, - բացականչում է Հայկը, - ավազակնե՛ր:
- Դե, - ասում է Պատվական պապը, - տասից ավել չէին լինի:

- Խաղալիք ատրճանա՞կ, - հարցնում է Անուշավան պապը, - Այ, մա՛րդ: Երանի իմ ձեռքի տակ էլ նման մի բան լիներ: Իմ դպրոցի ճամփան օվկիանոսով էր անցնում: Նավակիս վրա հարձակվող ծովահեններին քշելու համար ես իմ սարքած փայտե սուրն էի գործածում:
- Իսկ ծովահենները..., - ասում է Հայկը:
- Նրանք ատրճանակներ ու թնդանոթներ ունեին, հետն էլ միաչքանի էին, - ասում է Անուշավան պապը: - պատկերացնո՞ւմ ես:

- Այդքան բան, հա՞: Երանի ձե՛զ, - ասում է Մնացական պապը, - Հյուսիսային բևեռն անցնելուց հետո ես ամեն օր թաթարների մի ամբողջ կատաղի բանակի հետ էի հանդիպում: Տանկերով ու թնդանոթներով: Իսկ ես նրանց փաթաթած տետրով էի հաղթում:

- Ամե՞ն օր, - հարցնում է Հայկը:
- Օրը երկու անգամ, - ասում է Մնացական պապը, - մի անգամ դպրոց գնալիս, մի անգամ էլ՝ վերադառնալիս:

- Այդպես է, Հա՛յկ, - ասում է Պատվական պապը, - բայց դե, ինչ էլ լիներ, դպրոց էինք գնում: Հիշում եմ՝ շաբաթներ շարունակ դպրոց էի գնում կոտրված ոտքով ու երբ վերջապես հասնում էի, ուսուցչուհին ասում էր. «Դե՛, երեխաներ, արդեն երեքն անց կես է: Մինչ վաղը»:
- Կոտրված ոտիկով, - ծիծաղում է Անուշավան պապը, - պա՛հ, պա՛հ պա՛հ: Այդքան բա՞ն: Մի անգամ ես դպրոց եմ գնացել երկու փշրված ոտքով, տասնինը կոտրված կողով ու քառասունվեց աստիճան ջերմությամբ: Ու երբ վերջապես հասա դպրոց, տեսա ցուցանակ, որի վրա գրված էր. «Արձակուրդի պատճառով փակ է»:

- Է՛հ, - փնչացնում է Մնացական պապը, - ուրեմն իմ համեմատ բողկի պես առողջ ես եղել: Ես ոտքից գլուխ ջարդուփշուր եղած էի: Ու դեռ մի բան էլ կարմրախտ, խոզուկ, ջրծաղիկ, կարմրուկ ու թոքաբորբ ունեի, չհաշված, որ նշիկների վիրահատություն էի տարել: Բայց և այնպես դպրոց գնացի: Հասնեմ տեղ, ի՞նչ պարզվի՝ դպրոցի տեղում ավտոկայանատեղի են սարքել:

- Այո, Հայկ, - ասում է Պատվական պապը, - դրանք ուրիշ ժամանակներ էին:
- Ճիշտ է, Հայկ, - ասում է Անուշավան պապը, - դրանք շատ ուրիշ ժամանակներ էին:
- Իրոք որ, - ասում է Մնացական պապը, - այսօրվա երեխաներդ մեր համեմատ շա՛տ փափուկ կյանքով եք ապրում:

- Հերիք եղավ, բոլ եղավ. վերջ դրե՛ք ձեր փուչ պատմություններին, - բացականչում է Արմենուհի տատիկը:
Նա ամեն ինչ լսել ու ջղայնացած մոտենում է պապիկներին:

- Հերի՞ք չէ պահեք երեխային: Դպրոցից ուշանում է:
- Իրոք, - ասում է Տիգրանուհի տատիկը, - ո՞վ է հավատում ձեր հեքիաթներին:
- Դու գնա՛ դպրոց, Հա՛յկ, շուտ արա՛, - ասում է Մաքրուհի տատիկը, - ուշանում ես...
- Չեմ ուշանա, - ասում է Հայկը, - կարճ ճանապարհ գիտեմ: Այդ ճանապարհով որ գնամ, հաստատ չեմ ուշանա:

Եվ Հայկը ճանապարհ է ընկնում:

Երբ Հայկը հասնում է դպրոց, ուսուցչուհին դռան մոտ սպասում է նրան:
- Ըհը, Հայկ, - ասում է ուսուցչուհին, - լավ էլ ժամանակին ես հասնում:
- Ես, պապիկներիս մոտ եմ մնում, - ասում է Հայկը, - նրանք քաղաքից բավականին հեռու են ապրում: Լավ է, որ ինձ համար հեծանիվ են հավաքել:
- Ի՜նչ, - բացականչում է ուսուցչուհին, - այդքան երկար ճանապարհը դրանո՞վ ես անցել,- ուսուցչուհին մատնացույց է անում անիվը, որով Հայկը հասել է դպրոց,- դա՞ է հեծանիվը:
- Գիտե՛մ, գիտե՛մ,- ասում է Հայկը, - երանի ինձ: